

Փաստ. անվանումը	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԾՄ-16-01
Հաստատման ամսաթիվը	12/12/2014
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գլխական խորհուրդ
Անուն/Ազգանուն/ Պաշտոն	Մուրեն Օհանյան
Ստորագրություն	



## ԿԱՐԳ

### ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ

#### ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ: Հիմնարար և/կամ կիրառական ուսումնասիրություն, որը միտված է նոր փաստերի, մեթոդների և մեթոդաբանությունների վերհանմանը: Հետազոտության հիմքում դեռևս չքննարկված տեսական և գործնական հիմնահարցերի և հիմնախնդիրների պարզաբանումն է:

ԶԱՐԳԱՑՈՒՄ: Կիրառական լուծումների հանգեցնող գործընթաց, որի շրջանակներում հետազոտությունը նախորդում է կազմակերպական առաջընթացի:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ: Գիտական և կիրառական նորարությունները շեշտադրող գործընթաց, որը վերագրելի է կազմակերպության համապատասխան միավորի՝ հետազոտության և զարգացման կենտրոնին:

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ԵՄՀ հետազոտության և զարգացման գործընթացների պլանավորումը, խթանումը, իրականացումը, կազմակերպումը և կատարելագործումը, ինչպես նաև այդ գործընթացների արդյունքների վավերացումը և տարածումը տեղի են ունենում համաձայն ԵՄՀ հետազոտության և զարգացման կենտրոնի կողմից ստեղծված չափանիշների, չափորոշիչների, կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի՝ կենտրոնի ռազմավարությանը համահունչ, համապատասխան գիտական գործունեության նկատմամբ ՀՀ ԲՈՀ-ի, ազգային և միջազգային այլ պահանջների և ԵՄՀ կնքած միջազգային պայմանագրերի:

1.2. ԵՄՀ հետազոտողներն իրենց մտավոր աշխատանքի իրականացման ընթացքում պետք է առաջնորդվեն ըստ գիտատեխնիկական գործունեության մասին ՀՀ օրենքի, բարձրագույն և

հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի, ԵՄՀ հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման կարգի:

1.3. ԵՄՀ հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման կարգը մշակվում և լրամշակվում է ԵՄՀ հետազոտության և զարգացման գործընթացների իրականացման լավագույն փորձի, ինչպես նաև ակադեմիական հետազոտական փոխճանաչման ազգային և միջազգային չափանիշների և չափանիշների տեղայնացման արդյունքում:

2. ԵՄՀ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

2.1. Հետազոտության և զարգացման գործընթացներում իրականացվող վերլուծական աշխատանքի արդյունքները՝ հոդվածներ, էսսեներ, մենագրություններ, մեթոդական ուղեցույցներ, ցուցումներ, ձեռնարկներ, զեկույցներ, տեքստեր, տվյալների էլեկտրոնային շտեմարաններ և այլն, պետք է բավարարեն հղման և հեղինակային իրավունքի պահպանման ազգային և միջազգայնորեն ընդունելի պահանջների<sup>1</sup>:

2.2. ԵՄՀ հետազոտության և զարգացման ծրագրերի շրջանակներում ԵՄՀ կրթական համայնքի ներկայացուցիչների կողմից ներկայացվող նախագծերը պետք է համապատասխանեն վերջիններիս ներկայացման պահանջներին և ԵՄՀ դրամաշնորհային ծրագրերի իրականացման կարգին:

2.3. ԵՄՀ կրթական համայնքի ներկայացուցիչների իրականացրած հետազոտությունները, որոնք տեղի են ունենում ԵՄՀ-այլ ազգային/միջազգային կազմակերպություն համագործակցության շրջանակներում պետք է իրականացվեն համապատասխան պայմանագրային դրույթների հիման վրա, որոնք պետք է ենթադրեն նաև այդ հետազոտությունների արդյունքների վավերացման կոնկրետ պահանջները:

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԲՈՀ-ի կողմից ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերականներում հղումներ իրականացնելու ուղեցույցները, [http://www.law.nyu.edu/ecm\\_dlv1/groups/public/@nyu\\_law\\_website\\_library/documents/documents/ecm\\_dlv\\_006388.pdf](http://www.law.nyu.edu/ecm_dlv1/groups/public/@nyu_law_website_library/documents/documents/ecm_dlv_006388.pdf), հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքը, մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հեղինակային իրավունքի պայմանագիրը, ԵՄՀ գրագողության կանխարգելման ընթացակարգը:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ԵՄՀ հետազոտության և զարգացման կենտրոնը ոչ միայն պատասխանատու է ԵՄՀ հետազոտական աշխատանքների արդյունքների վավերականության համար, այլև ապահովում է իր կողմից խթանվող, կազմակերպվող և վերահսկվող գործընթացների թափանցիկությունը՝ արխիվացնելով ԵՄՀ հետազոտության և զարգացման գործընթացային յուրաքանչյուր միավորի հետ կապված նյութեր՝ ստեղծելով հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման գործընթացի չափելիության նախադրյալները:

3.2. ԵՄՀ հետազոտության և զարգացման կենտրոնը ստեղծում է ԵՄՀ հետազոտության և զարգացման գործընթացային միավորների տվյալների շտեմարան: